Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի
(գանգատ թիվ 22999/06)
Երրորդ բաժանմունքի 2012 թվականի հունիսի 12-ի վճիռ

Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 3-րդ հոդված

Փոխհատուցում

Արդարադատության սխալի հետևանքով տուժողի անկարողությունը՝ ոչ նյութական վնասի համար փոխհատուցում պահանջել: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի 13-րդ հոդված

Պաշտպանության արդյունավետ միջոց

Ոստիկանության դաժան վերաբերմունքի արդյունքում կրած ոչ նյութական վնասի փոխհատուցում ստանալու հնարավորության բացակայություն: *Արձանագրվել է խախտում:*

Փաստերը

1999 թվականին առաջին դիմումատուն մեղավոր է ճանաչվել սպանության և բռնաբարության կատարման մեջ և դատապարտվել 15 տարվա ազատազրկման: Այնուամենայնիվ, նա շարունակել է պայքարել իր անմեղության համար, և 2004 թվականին նրա նկատմամբ կայացված դատավճիռն ուժը կորցրած է ճանաչվել և նա ազատ է արձակվել: Սպանության գործի նախաքննությունը կատարած ոստիկանության երկու աշխատակիցների նկատմամբ իրենց լիազորությունները գերազանցելու հիմքով քրեական գործ է հարուցվել այն բանից հետո, երբ առաջին ատյանի դատարանը արձանագրել է, որ նրանք դաժան վերաբերմունք են ցուցաբերել առաջին դիմումատուի նկատմամբ՝ նրանից խոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Առանձին իրականացվող քաղաքացիական վարույթի ընթացքում առաջին դիմումատուն կորցրած եկամուտների մասով փոխհատուցում է ստացել, բայց ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ նրա հայցը մերժվել է այն հիմքով, որ քաղաքացիական օրենսգիրքը նման տեսակի վնաս չէր նախատեսում:

Իրավունքը՝ Կոնվենցիայի 13-րդ հոդված

Դատարանը սկզբում մատնանշել է, որ Կոնվենցիայի մեկ այլ հոդվածի խախտման առկայությունը չի կարող նախապայման հանդիսանալ 13-րդ հոդվածի կիրառման համար: 13-րդ հոդվածի կիրառման համար բավարար է, որ անձն ունենա Կոնվենցիայի իմաստով հիմնավոր պահանջ: Դատարանն արձանագրել է, որ դիմումատուն անկասկած ունեցել է ներպետական դատարաններում հիմնավոր պահանջ՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի ենթարկվելու համար: Հետևաբար, Կոնվենցիայի 13-րդ հոդվածը կիրառելի է, թեև Եվրոպական դատարանը նշել է, որ ինքը չի կարող ըստ էության քննել 3-րդ հոդվածի նյութական խախտման փաստը, քանի որ նշված դեպքերը տեղի են ունեցել ՀՀ կողմից Կոնվենցիան վավերացնելուց առաջ: Դատարանն նշել է նաև, որ ինքը բազմաթիվ գործերով արձանագրել է, որ Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների՝ 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում ոչ նյութական վնասի համար փոխհատուցում ստանալու հնարավորությունը պետք է նախատեսված լինի պաշտպանության հնարավոր միջոցների շարքում: Քանի որ ներպետական օրենսդրության համաձայն՝ որևէ փոխհատուցում հասանելի չի եղել առաջին դիմումատուին, ուստի նա զրկված է եղել արդյունավետ պաշտպանության միջոցից:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):

Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդված

Քանի որ դիմումատուի դատավճիռը բեկանվել է, և նա փոխհատուցում ստանալու համար դիմել է թիվ 7 Արձանագրության՝ ՀՀ-ի համար ուժի մեջ մտնելուց հետո, Եվրոպական դատարանը հավաստել է իր ժամանակային *[ratione temporis]* իրավազորությունը այս գանգատի նկատմամբ: Դատարանն արձանագրել է, որ թեև այդ դրույթը երաշխավորում է փոխհատուցման տրամադրումը համապատասխան երկրի օրենսդրությանը կամ պրակտիկային համապատասխան, դա չի նշանակում, որ փոխհատուցում չի վճարվում, եթե ներպետական օրենսդրությունը կամ պրակտիկան

չեն սահմանում նման փոխհատուցման վերաբերյալ դրույթներ։ Բացի այդ, Եվրոպական դատարանը գտել է, որ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը ոչ միայն սխալ դատապարտման դեպքում նյութական վնասի վերականգնումն է, այլ նաև դատական սխալի հետևանքով դատապարտված անձին փոխհատուցման տրամադրումն է ցանկացած ոչ նյութական վնասի, օրինակ՝ տագնապի, անհանգստության, անհարմարության և կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի համար։ Նման փոխհատուցում դիմումատուին տվյալ գործով, այնուամենայնիվ, չի տրվել։

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):